

ԼԵզՈՒԱԲԱՆԱԿԱՆ
STUDI LINGUISTICI

ԳՐԱԲԱՐԵԱՆ ՅԱՐԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՄԱԿԲԱՅ-ԲԱՅ ԿԱՂԱՊԱՐՈՎ
(Տարժամանակեայ հայեցակետ)

Լեզուի տարժամանակեայ կտրուածքում նրա համակարգի տարբեր մակարդակներում տեղի են ունենում որոշակի փոփոխութիւններ, փոխակերպական գործընթացներ, որոնք սահմանազատիչ դեր են կատարում տուեալ լեզուի գոյավիճակների բնութագրման հարցում: Այդ փոփոխութիւնները կարող են ազդել լեզուի տիպաբանական բնութագրի վրայ՝ ընդհուպ փոխելով նրա ձեւաբանական կամ շարահիսսական տիպերը:

Գրաբարի եւ արդի հայերէնի բառակազմական մակարդակների տարժամանակեայ քննութիւնը ցոյց է տալիս, որ գրաբարեան որոշակի յարադրութիւններ ժամանակակից հայերէնում հանդէս են գալիս համադրական կառուցատիպերով, որ հետեւանք է լեզուական միաւորների փոխակերպման գործընթացի:

Փոխակերպումը լեզուական արտացոլման դրսեւորումներից է՝ առարկայական իսկութեան արտացոլման վերացարկուած գործելաոճ (մեխանիզմ). փոխակերպումն ընթանում է որոշակի փուլերով, որի տարբեր աստիճաններում ի յայտ են գալիս որոշակի փոխակերպներ, որոնք յատկանշւում են վերացարկուածութեան տարբեր աստիճաններով: Փոխակերպումը լեզուական միեւնոյն բովանդակութեան արտայայտութիւնն է լեզուական այլ կառույցներով. այլ կերպ ասած՝ փոխակերպել մի նախադասութիւն՝ նշանակում է այն փոխել մի քերականական ձեւից միւսի՝ առանց փոխելու նրա իմաստը¹:

1 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքները, Հայկական ՍՍՀ ԳԱ հրտ., Երեւան 1973, 502:

Գրաբարեան յարադրութիւնները, լեզուի տարժամանակեայ դիտուածքով փոխակերպուելով համադրական կազմութիւնների, պահպանել են բովանդակային հարթակը՝ երբեմն ի յայտ բերելով իմաստային որոշակի տարբերակումներ: Փոխակերպման գործընթացի ուսումնասիրութիւնը բացայայտում է սերման որոշակի կաղապարներ, որոնք վերացարկուած մտածողութեան տարբեր աստիճանների դրսեւորումներ են: Լեզուի փիլիսոփայութեան տեսանկիւնից՝ սերման կաղապարներ են համարուում միջոկային նախադասութիւններն ու բառակապակցութիւնները, որոնցից սերում են բաղադրեալ բառերի կաղապարները՝ որպէս հետեւանք մախադասութիւն > բառակապակցութիւն փոխակերպական գործընթացի: Փոխակերպման գծային հարթակում բառակապակցութիւնները բնութագրուում են երկակի դերով. նախ՝ որպէս միջոկային նախադասութիւնների փոխակերպման հետեւանք, երկրորդ՝ որպէս սերիչ կաղապարներ՝ բաղադրեալ բառերի ձեւաւորման համատեքստում:

Յարադրական կառոյցների անցումը համադրական կառուցատիպերի՝ լեզուի տնտեսման օրէնքի դրսեւորումներից է². Եթէ լեզուում միեւնոյն իմաստը հնարաւոր է արտայայտել երկար եւ կարճ ձեւերով, ապա լեզուն նախընտրում է կարճ ձեւերի գործածութիւնը: Ըստ այդմ, բայական յարադրութիւնները համարուում են երկար ձեւեր, իսկ դրանցից սերած համադրական կառոյցները՝ կարճ. հետեւաբար լեզուն նախընտրում է համադրական կառուցատիպերի գործածութիւնը: Միեւնոյն ժամանակ, պէտք է նշել, որ վերլուծական տիպից կցականութեան անցումը տեղի է ունենում ժամանակի ընթացքում, եւ, ըստ այդմ, փոխակերպման իրողութիւնն արձանագրուում է լեզուի տարժամանակեայ կտրուածքում:

Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ վերլուծական տիպից կցականութեան անցումն ուղեկցւում է փոխակերպական որոշակի կաղապարներով³, որոնց մէջ կենսունակ եւ գոյական + բայ > բայ, գոյական + բայ > ածական կաղապարները, որոշակի դեր ունեն նաեւ գրաբարեան մախդաւոր վերլուծական կառոյցներ:

2 Լեզուի պատմական զարգացման պատճառների եւ տնտեսման սկզբունքի մասին տես ԽԱԶԱՏՐԵԱՆ, Լ., Ընդհանուր լեզուաբանութեան դասընթաց, «Զանգակ» հրտ., Նրեւան 2017, 194-195:

3 Փոխակերպման մասին տե՛ս ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., *և՛. աշխ.*, 565:

րը⁴, *ինչպէս նաեւ մարմնամասերի անուանումներով վերլուծական յարադրութիւնները*:

Այսպէս, գոյական + բայ > բայ կաղապարով են առաջացել ակնարկել (< ակն «աչք» եւ արկանեմ «ձգել, գցել, նետել»), ունկընդդել (< ունկն «ակամջ» եւ դնեմ «դնել»), ակնածել (< ակն ածեմ), փարկոծել (< «Փարով կոծել՝ ծեծել»), մտածել (< գմտաւ ածել») եւ այլ կազմութիւններ⁵:

Մակբայ + բայ > բայ փոխակերպական կաղապարով են առաջացել առաջարկել, բացառել, առաջադրել, միջամտել, հետապնդել, շրջանցել եւ այլ բայեր, որոնց բայահիմքը բնորոշւում է յատկանշային իմաստով՝ յարակատար կամ ենթակայական դերբայների նշանակութեամբ, դրանց մի մասը հանդէս է գալիս նաեւ մակբայի խօսքիմասային արժէքով՝ ձեւաբանական մակարդակում ցուցաբերելով խօսքիմասային տարարժէքութիւն, ինչպէս՝ վերահասու, վերոգրեալ, վերոյիշեալ, վերոքերեալ, առաջիկայ, արագընթաց, Բեքեւաֆայլ եւ այլն:

Գոյական + բայ > ածական կաղապարով են առաջացել վըրէթխնդիր (< վրէթ խնդրել), ֆինախնդիր (< ֆէն խնդրել), օրինապաշտ (< պաշտել զօրէնս), աստղագուշակ (< գուշակել աստեղը, օրինապահ (< պահեմ զօրէնս) եւ այլն:

Փոխակերպական գործընթաց են ընդգրկուել նաեւ անուանաբայական որոշ յարադրութիւններ, որոնց արտայայտութեան պլանում առկայ են մարմնամասերի անուանումներ, ինչպէս՝ ակն ածել > ակնածել, ակն ունիմ > ակնունիմ // ակնկալել, զակն արկանել > ակնարկել, ձեռն հասանել > ձեռնհաս, դնեմ զձեռն (ի վերայ ուրուք) > ձեռնադրեմ, այս կաղապարով հանդիպում են նաեւ ածանցաւոր բառեր, ինչպէս՝ յակն առնում > ակնառու // աչառու, ըմպել զարիւն > արիւնարբու եւ այլն:

Այդպէս նաեւ զրաբարի որոշ նախդրաւոր հոլովածուներ եւ հոլովական իմաստների արտայայտման վերլուծական ձեւեր վերածուել են համադրական-կցական կառուցատիպերի: Օրինակ,

4 Գրաբարի նախդրաւոր կառոյցների փոխակերպումների մասին տե՛ս ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Հ. Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Ս. Ղազար, Վնենտիկ 1852, 468: ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Ա., Գրաբարի ձեռնարկ, «Լոյս» հրտ., Երեւան 1976, 273-274:

5 ՄՈՒՐՎԱԼԵԱՆ, Ա., Հայոց լեզուի դարձուածաբանութիւն եւ քայակագութիւն, Հայկական ՍՍԻ ԳԱ հրտ., Երեւան 1959, 94:

գրաբարի բացառական հոլովածեւը նախդրաւոր կազմութիւն ունի. ի շղթայէ (շղթայից) - ի շղթայից (շղթաներից) յոգնակի բացառականի այս ձեւերը, զրկուելով նախդրից, արդի հայերէնում -ից մասնիկով կազմում են եզակի եւ յոգնակի բացառականի ձեւերը՝ շղթայ-ից եւ շղթաներ-ից: Նմանապէս, գրաբարում ներգոյական հոլովի իմաստն արտայայտուում է նախդրաւոր կազմութեամբ՝ ի փաղափ (քաղաքում), ի փաղափս (քաղաքներում). արդի հայերէնում ներգոյական հոլովը մասնիկաւոր-համադրական կազմութիւն ունի. փաղափ-ում, փաղափներ-ում եւ այլն:

Եթէ ընդհանրացնենք դիտարկուած լեզուական իրողութիւնները, կարող ենք ասել, որ, ի հակադրութիւն գրաբարի, արդի հայերէնի հոլովական համակարգին բնորոշ է կցականութիւնը (մասամբ՝ նաեւ թեքականութիւնն ու տարահիմքութիւնը), իսկ որպէս տիրապետող տիպաբանական յատկանիշ (չափորոշիչ) ընդունուում է կցականութիւնը՝ գրաբարի խառն (կցականութեան եւ թեքականութեան) տիպաբանութեան համեմատ:

* * *

Փոխակերպական կաղապարների շարքում կենսունակ է նաեւ մակրայ + բայ կաղապարը, որի միջոցով առաջացած բարդութիւնները ձեւաւորուել են մակբայի եւ բայահիմքի ձուլման ճանապարհով: Այդ կարգի բարդութիւնները կարելի է ներկայացնել որոշակի խմբաւորումներով՝ ելնելով կցական բարդութեան խօսքիմասային արժէքից:

Դիտարկենք մակրայ + բայ կաղապարով ձեւաւորուած համադրական բարդութիւնները լեզուի տարժամանակեայ կտրուածքում:

Ա. Մակրայ + բայ > բայ

Փոխակերպական այս կաղապարով ժամանակակից հայերէնում ունենք մի շարք բարդ բայեր, ինչպէս՝ առաջարկել, բացառել, առաջադրել, միջամտել, հետապնդել, շրջանցել եւ այլն:

Դիտարկենք այդ բայերի սերիչ կաղապարներն ու ցոյց տանք վերջիններիս ձեւաիմաստային յարաբերութիւնները փոխակերպուած համադրական կազմութիւնների նկատմամբ:

Այսպէս, գրաբարում առաջի արկանել յարադրութիւնը նշանակում է առաջը՝ առջեւը դնել, ինչպէս՝ «Եւ արկ առաջի արանցն

ուտել» (ԴԹԳ Դ,40): «Եւ արկ առաջի նոցա խոտս տակաւ մեծաւ եւ կերան եւ արբին» (ԴԹԳ Զ,23): «Բագումբ ի նոցանէ ... արկին առաջի զգանձս իւրեանց՝ տալ փոխանակ անձանց իւրեանց» (ԳՄԿ Բ,17): «Զիւր դէտսն առաջի արկեալ յերամակակայն արշաւեր» (Փաւս.⁶ 213):

Գրաբարում բայական բաղադրիչի երկրորդ հիմքով (արկ) ձեւաւորուել է առաջարկ համադրական բարդութիւնը՝ առաջնորդ իմաստով, ինչպէս՝ «Սիմոն (մոգ) առաջարկ գտանի մանիֆեստացն» (ՆՀԲ⁷, Ա., 288)⁸:

Արդի հայերէնում առաջարկ գոյականը հեռացել է նախնական իմաստից. այն նշանակում է՝ 1. քննարկմանը ներկայացուող միտք՝ գաղափար՝ ծրագիր. «Գործարանում սոցմրցումը ծաւալելու առաջարկը հաւանութիւն գտաւ բոլոր ժողովականների կողմից» (Մամուլ): 2. Որեւէ գործ կատարելու ցանկութիւն՝ հրաւեր. «Եւ Հեղուշը, Մկրտչի առաջարկով, նոր ֆերմայում առաջ քաշուեց իրրեւ վարիչ» (ՊՄ⁹ 3, 30):

Արդի հայերէնում առաջարկ սերող հիմքով ունենք առաջարկել համադրական կազմութիւնը՝ որեւէ բանի վերաբերեալ գաղափար՝ ծրագիր տալ. «Եկէ՛ք սրան մի քարաքաղնիս անենք,- ծխի միջից առաջարկեց Նետոյ բիճեն» (ՅԹ, 1, 257): «Դիվանային առաջարկում է ամուսնանալ իր հետ» (ՅԹ, 3, 230):

Գրաբարում ի բաց մակբայն անորոշ դերբայի հետ կազմում է՝ բայական նշանակութեամբ յարադրութիւններ. ի բաց առնել - «հեռացնել, օտար դարձնել» եւ ի բաց առնուլ - «վերացնել»: Օրինակ. 1. «Ի բաց արար գանձն իմ ի խորամանկութենէ նոցա» (Սղ Լդ,17): «Ի բաց արարի գիտադուքիւն իմ» (Եմ Ժգ,5): 2. «Եւ ասէ Յակոբ ցընտանիս իւր. Ի բաց առէ՛ք զաստուածսդ օտարոտիս, որ ընդ ձեզ են ի միջոյ ձերմէ» (Ծն Ժէ,2):

6 ՓԱԽՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս 1913: (Այսուհետ՝ Փաւս.):

7 Նոր քաղցիրէ հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց, Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան, հհ. Ա.-Բ., ի վեց տետրիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1836-1837: (Այսուհետ՝ ՆՀԲ.):

8 Գրաբարում բայական բաղադրիչի երկրորդ հիմքով (արկ) ձեւաւորուել է առաջարկ համադրական բարդութիւնը՝ «առաջնորդ» իմաստով, ինչպէս՝ «Սիմոն (մոգ) առաջարկ գտանի մանիֆեստացն» (ՆՀԲ 1, 288):

9 ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Երկերի ժողովածու, հհ. 1-4, Երեւան 1972-1973: (Այսուհետ՝ ՊՄ):

Արդի հայերէնում գրաբարեան յարադրութիւնից առաջացել է բացառել համադրական կազմութիւնը՝ հանել՝ հեռացնել որեւէ բանի կազմից. մերժել, հնարաւոր չհամարել. թոյլ չտալ, հրնարաւորութիւնը վերացնել իմաստներով: Օրինակ. «Որ այսու եւեթ քացառուած հաշուեմք հիւանդութիւնը երիկամների» (ՊՍ 2, 50): «Զեր մշակած նախագիծը քննապահպանական առումով աղէտ կարող է բերել շրջակայ միջավայրին. ուստի քացառուում է, որ այն ընդունեմք որպէս մօտակայ աշխատանքային ծրագիր»¹⁰:

Գրաբարում առաջի մակբայը բայական բաղադրիչի հետ կազմում է մի շարք յարադրութիւններ՝ բայական արժէքով, ինչպէս՝ առաջի դնեմ, առաջի արկանեմ եւ այլն:

Այսպէս, առաջի դնեմ կապակցութիւնը նշանակում է մըտփում դնել. աչքի առաջ ունենալ, յանձն առնել. մտաբերել, ինչպէս՝ «Իբրեւ ... գաւրքն եւս միաբանութեամբ միով գիաշտութիւն յանձն առնուին, եղին գուխտն առաջի եւ ... դաշինս կոեցին» (ԲՄկ Ժդ, 21): «Զի յայն, զօր առաջի եղ, հասանել կարասցէ» (Եզն.¹¹ 5): Զիւր առաջի եղեալ զխորհուրդն կատարելով՝ յանձն իւր առնոյր կատարել» (Փարպ.¹² 63): «Սուտ խոստմամբ զանիւնելի յոյսն առաջի դնէր» (Եդ.¹³ 37): «Առաջի դնէր զանձն վարդապետի» (Կոր.¹⁴ 72): «Որոց ... առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն» (Կոր. 76):

Արդի հայերէնում ունենք արդէն ձեւաւորուած համադրական կազմութիւն՝ առաջադրել, որ իմաստային նրբերանգներ է ցուցաբերում նախնական իմաստի նկատմամբ, ինչպէս՝ առաջարկել, առաջ փաշել. յանձնարարել, առաջադրանք տալ. յայտնել՝ յայտարարել որեւէ բանի մասին՝ պահանջելով բաւարարում, ինչպէս՝ «Նրան գիւղխորհրդի նախագահ առաջադրելու լուրը արդէն տարա-

10 Մուրացանի լեզուում *ի քաց առեալ* կապակցութիւնը գործածուել է որպէս հնարանութիւն, ինչպէս՝ «Կէս ժամուայ մէջ Գեղի բոլոր ժողովուրդը *ի քաց առնելով* կանանց եւ երեխայոց, հաւաքուում էր բերդի դռան հրապարակը» (ՄՈՒՐԱՅԱՆ, *Գէորգ Մարգպետունի*, Երեւան 1982, 277):

11 ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՅԻ, *Եղծ աղանդոց*, Վեներիկ 1826: (Այսուհետ՝ Եզն.):

12 ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻ, *Պատմութիւն Հայոց*, Վեներիկ 1875: (Այսուհետ՝ Փարպ.):

13 ԵՂԻՇԷ, *Վասն վարդանայ եւ Հայոց պատերազմին*, Երեւան 1957: (Այսուհետ՝ Եդ.):

14 ԿՈՐԻԻՆ, *Վարժ Մաշտոցի*, Երեւան 1941: (Այսուհետ՝ Կոր.):

ծուել էր գիւղում» (Ն. Զարեան): «Օրինագանցներին պէտք է հասարակական պարսաւանքի ենթարկել եւ մեղադրանք *առաջադրել*»¹⁵:

Գրաբարում առաջի արկանեմ *յարադրութիւնը նշանակում է* ամուր բռնել. գործի դնել. դիտել: Այսպէս. «Նորա գիւր արուեստն *առաջի արկեալ* խրատէր» (Կոր. 62): «Որոց հասեալ ի կողմանս Կեսարու, զՏիրան եւ զգօրսն արեւմտեան *առաջի արկեալ*՝ ածեն տագնապաւ մինչեւ ի քաջ ընդարձակ հովիտն Բասեմայ» (Խոր.¹⁶ 184): «Եւ մեզ խոյզ խնդրոյ *առաջի արկանել* ... զագգիս մերոյ կարգել զպատմութիւնն ճշդիւ» (Խոր. 11): «Զօր *առաջի արկեալն* էր» (Ագաթ.¹⁷ 293):

Արդի հայերէնում ունենք համաժին առաջարկել *համադրական կազմութիւնը*՝ «մի քան կատարելու՝ անելու գաղափար տալ» բայական *նշանակութեամբ*: Այսպէս. «Առաջարկում էր յատուկ հսկողութիւն սահմանել ուսանողների վրայ» (Ա. Բակունց):

Գրաբարում ի մէջ մակբայը *յարադրութիւն է կազմում մի շարք բայերի հետ, որոնցից արդի հայերէնում ունենք համաժին համադրական կազմութիւններ, ինչպէս՝* մտանել ի մէջ > միջամտել, ի մէջ բերել > մէջբերել, ի մէջ անկեալ > միջանկեալ, ի մէջ արկանել > միջարկել *եւ այլն*:

Գրաբարում ի մէջ արկանել *յարադրութիւնը նշանակում է* մէջտեղ գցել. մէջ բերել, *ինչպէս՝* «Լաւ է ... նախ ընդ երկու բաժանել ... ապա եւ ի մէջ արկանել ի ծառայութիւն» (Փաւս. 63):

Լեզուի պատմութեան ընթացքում վերլուծական այդ ձեւից առաջացել է միջարկել *համադրական բայական բառոյթը, որ գործառական արժէք է ձեռք բերել ածանցաւոր՝* ընդմիջարկել *կառուցատիպով՝* արտայայտելով *հետեւեալ նշանակութիւնները*. 1. պատումի մէջ անծանօթ հատուածներ ներմուծել, 2. խօսքի մէջ միջանկեալ որեւէ քան աւելացնել, 3. պատումն ընդհատել՝ այլ ասոյթ վկայելով: *Օրինակ՝* «Խորենացին, Հայքի պատմութիւնը շարադրելիս, հիմնական պատումները յանախ *ընդմիջարկում* է յարա-

15 Բաղադրիչների ստուգաբանական իմաստները պահպանուել են *առաջադիր* բարդութեան իմաստային կառուցուածքում, օրինակ. «Դիմորդն *առաջադիր* հարցերին սպառիչ պատասխան է տուել»:

16 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն Հայոց, Տփլիս 1913: (Այսուհետ՝ Խոր.):

17 Ա.Գ.Ա.ՆԳԵՂՈՍ, Պատմութիւն Հայոց, Տփլիս 1909: (Այսուհետ՝ Ագաթ.):

կից պատմութիւններով, որոնք տեղեկութիւններ են հաղորդում հաբեւան երկրների մասին»:

Գրաբարում մտանել ի մէջ *յարադրութեան կառուցուածքում ի մէջ մակբայը հանդէս է գալիս բայական անդամի պարագայ լրացման դերում՝ ներգոյական հոլովի իմաստով. յարադրութիւնը նշանակում է մի բանի՝ խօսքի մէջ մտնել, մէջը մտնել, ինչպէս՝ «Մտանել կամ անցանել ի մէջ» (ՆՀԲ Բ., 259):*

Արդի հայերէնում ունենք միջամտել *համադրական կազմութիւնը՝* ուրիշի գործերին խառնուել. մի բանի իմքնակամ մասնակցել, չէզոք դիրք չպահպանել *իմաստներով, ինչպէս՝ «Ես միջամտեցի, բաց թողնել տուի նրան» (ՅԹ 3, 120): «Միջամտեց* Կարօն,- նոր փաստարկներ բերեց նոյնիսկ Սերգեյի մի նամակից» (ՊՄ 3, 105):

Գրաբարում ի մէջ բերել *յարադրութիւնը նշանակում է* մէջտեղ բերել՝ ածել», *ինչպէս՝ «Նա եւ ի մէջ բերէր* զամբաստանութիւն նորա» (Եղ. 133): «Ձառակսն յաճախագոյնսն *ի մէջ բերեալ» (Ագաթ. 281): «Ընտրելի է քեզ* զմի յայսցանէ կամ լինել եղբայրասէր ... կամ զանձին իմանալով զբարի՝ խորհուրդ օգտակար *ի մէջ բերել» (Խոր. 80):*

Արդի հայերէնում յարադրութեան բաղադրիչների ճուրման ճանապարհով առաջացել է մէջբերել *համադրական կազմութիւնը՝ իմաստային տարբերակումով՝ «մէջտեղ բերել, երեսն հանել, յիշել, մէջբերում կատարել, վկայակոչել», ինչպէս՝ Գիտական աշխատանք կատարելիս անհրաժեշտ է քննադրային օրինակներ մէջբերել¹⁸:*

Գրաբարում ի մէջ անկեալ (անկանիւ) *վերլուծական կազմութիւնը նշանակում է* մէջ ընկնել, *ինչպէս՝ «Մի՛ ոք չար անջըրպետ ի մէջ անկեալ* զմեզ քակեսցէ ի սմանէ» (Եղ. 67): «Եւ այլն անկաւ *ի մէջ փշոց, եւ ելին փուշքն եւ հեղձուցին զնա» (Մթ Ժգ, 7):*

Արդի հայերէնում ունենք համատիպ միջանկեալ համադրական կազմութիւնը՝ ածականի յատկանշային իմաստով. 1. հիմնական խնդրի հետ անմիջականօրէն կապ չունեցող. «Բայց մեր այդ արշաւանքները գերծ չէին միջանկեալ կռիւներից» (Ռ. Զարեան): 2. ի միջի այլոց, հէնց այնպէս ասուած. «Մեր ասելու նպատակը այդ չէր. դա եղաւ միջանկեալ մի բան» (Ս. Զօրեան):

¹⁸ Արդի հայերէնում գործածուում է նաեւ *մէջ բերել* վերլուծական կառուցատիպով:

Գրաբարում զհետ պնդել յարադրութիւնը նշանակում է ուժգին թափով ընթանալ, յարձակուել, վազել, *ինչպէս՝ «Եւ պնդեցան Եգիպտացիք զհետ նոցա եւ գտին զնոսա բնակեալս առ ծովեզերքն» (Ել Ժբ,9): «Եւ լուա Սաւուդ, եւ պնդեցաւ զհետ Դաւթի յանապատն Մառնայ» (ԱԹգ Իգ,22):*

Արդի հայերէնում ունենք համադրական կազմութիւնը՝ հետապնդել՝ *իմաստային որոշակի տարբերակումով, ինչպէս՝* հալածել, մէկի հետեւից ընկնել՝ վրէժ լուծելու համար, հանգիստ չտալ, դատական գործ յարուցել: *Օրինակ՝ «Երկու աչքեր անվերջ հետապնդում են քեզ» (ՊՍ 2, 123): «Շատ տարօրինակ ու տաճ ցանկութիւն հալածում է ինձ ու հետապնդում» (ՊՍ 2, 208)¹⁹:*

Գրաբարում շուրջ անցանել յարադրութիւնը նշանակում է շրջուել, շուռ գալ, պտտուել, *ինչպէս՝ «Ելանէր շուրջ անցանէր միանգամ զիցաւ իւրով» (ՆՀԲ Բ., 492):*

Արդի հայերէնում ունենք համադրական՝ շրջանցել կազմութիւնը *իմաստային որոշակի դրսեւորումներով. քշմամու կամ ուղղակի կէտի շուրջն անցնել, թիկունքն անցնել. փխր. խուսափել որեւէ հարցի ֆնտրելու միջ, անտեսել, ինչպէս՝ «Զիւնը, կիսուած պատառների, Արտասուում էր գլուր-գլուր, Շրջանցելով լեռ ու բլուր՝ Առու դարձած հոսում էր ցած» (ՊՍ 4, 171): «Եւ ուզում է շրջանցելով խօսքը բերել մեղուանոցին» (ՊՍ 3, 89):*

Գրաբարում շուրջ պատել նշանակում է շուրջը՝ շուրջընդոքը պատ փաշել, պարփակել. մի բանով ծածկել, *ինչպէս՝ «Մի ելանէ՛ք յանդս եւ ընդ՝ փանապարհս մի գնայ՛ք, զի սուր թշմամեաց շուրջ պատեալ է» (Եմ 2,25): «Զի յորժամ ցաւ ինչ ցաւէր գազանացն, գային շուրջ պատէին զնովաւ» (Փաւս. 185): «Մէք եւ մառախուղ սրահակածել շուրջ զլերամբն պատեալ» (Ագաթ. 159): «Ապրեցո՛ւ եւ զմեզ յանօրէնութեանցս հեղեղէ, որ շուրջ պատեալ է զմեօք» (Ագաթ. 95):*

Գրաբարում կայ համածին համադրական կազմութիւնը՝ շրջապատել, որ պահպանել է յարադրութեան իմաստը, *ինչպէս՝ «Եւ իմքեանք բնակէին ընդդէմ նոցա ի միւս կողմն գետոյն՝ ամրացուցեալ զտեղի բանակի իւրեանց պարկեմաւ փոսիւ շրջապատեալ»*

19 Հետ մակրայական բաղադրիչով որոշ յարադրութիւններ գրաբարում հանդէս են գալիս համադրական կառուցատիպով, ինչպէս՝ *յետածգել, հետամտել* եւ այլն:

(Ղեւ.²⁰ 103): «Ամենայնիւ սպառեալ զմարմինս ապականութիւնն շրջապատեալ՝ մեռոյց Աստուծոյ» (Նար.²¹ 56):

Արդի հայերէնում գործածւում է գրաբարեան համադրական կազմութիւնը՝ իմաստային որոշակի տարբերակումով՝ մէկին կամ ինչ-որ բան չորս կողմից օղակի մէջ առնել. պաշարել, *ինչպէս՝* «Հերոսին շրջապատել էին իւր ընկերներից մի քանիսը» (ՅԹ 3, 20): «Իսկոյն չորս կողմից շրջապատում են, ու էլ փրկութիւն չկայ» (ՅԹ 3, 106):

Գրաբարում ի վեր հանել վերլուծական կազմութիւնը նշանակում է յայտնել, յայտնի՝ բացայայտ դարձնել. ասել, *ինչպէս՝* «Ի վեր հանել զխորհուրդն կամ զբանսն» (ՆՀԲ Բ., 801): «Յետ բժշկութեանն հրաման տայ մի՛ ոք ումեք ի վեր հանել» (ՆՀԲ Բ., 801):

Արդի հայերէնում առաջացել է վերհանել համադրական կազմութիւնը՝ ցոյց տալ, մեկնաբանել, բացայայտել բայական իմաստներով: Օրինակ. «Ջ. Բրունոն, ուսումնասիրելով արեգակնային համակարգի կառուցուածքը, վերհանեց Երկրի գնդաձեւութեան գաղափարը»:

Բ. Մակրայ + բայ > ածական

Փոխակերպական այս կաղապարով առաջացած բարդութիւնների խօսքիմասային արժէքը պայմանաւորուած է բարդութեան բայահիմքի յատկանշային իմաստով՝ յարակատար կամ ենթակայական դերբայների նշանակութեամբ: Այդ ճանապարհով արդի հայերէնում ունենք վերահասու, վերոգրեալ, վերոյիջեալ, վերորերեալ, առաջիկայ, արագընթաց, թեթեւափայլ, միջանցիկ եւ այլ ածականներ. դրանց մի մասը հանդէս է գալիս նաեւ մակբայի խօսքիմասային արժէքով՝ ձեւաբանական մակարդակում ցուցաբերելով խօսքիմասային տարարժէքութիւն:

Գրաբարում ի վերայ հասնել կայուն կապակցութիւն է, նշանակում է հասու՝ վերահասու լինել, հասկանալ, տեղեկանալ. գիտենալ²², *ինչպէս՝* «Եւ ասէ Տէր ցՄովսէս. Այծմ գիտացես, եթէ

20 Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887: (Այսուհետ՝ Ղեւ.):

21 ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Մատեան ողբերգութեան, Պուլեմոս Այրէս 1948: (Այսուհետ՝ Նար.):

22 Կապակցութիւնը հանդէս է գալիս նաեւ բաղադրիչների ուղղակի իմաստներով՝ մի բանի վրայ հասնել. տեղ հասնել իմաստներով, ինչպէս՝

հասանիցէ ի վերայ քո քան իմ, եթէ ոչ» (Թւ ժա, 23): «Ապա իբրեւ հասանէր թագաւորն յիրացն հաստատութեան ի վերայ, իսկիւն աւսայր քանին առ ժամանակ մի» (Փաւս. 103): «Ճշմարտիւ ի վերայ հասա՛, եթէ զսերն մեր հաստատուն պահեցեր» (Խոր. 276): «Յորժամ սկսաւ քանել զամենայն ուսմունս եւ հաստատութեամբ ի վերայ հասա, առաւել վեհ գտանէր զօրէնս քրիստոնէից քան զամենեցուն» (Եղ. 83):

Գրաբարում ի վերայ հասանել կապակցութիւնից առաջացել է վերահասու համադրական (ածանցաւոր) կազմութիւնը, որ հանդէս է գալիս լինել բայի յարադրութեամբ՝ շատ լաւ գիտակ լինել, հասկանալ, իմանալ, ստուգել նշանակութիւններով: Օրինակ. «Հրամայեալ մեր տեսանել զթուղթս՝ վերահասու եղա՛մ գրելոցս առ ի քեզ» (Խոր. 335): «Եւ քանեալ՝ թէ ով ո՛ր նա իցէ՛ եղև վերահասու, թէ նա է Արտաւազդ՝ յագգէն Մանդակունեաց» (Խոր. 217): «Հրամայեալ մեր տեսանել զթուղթս՝ վերահասու եղա՛մ գրելոցս առ ի քեզ» (Խոր. 335):

Արդի հայերէնում գրաբարեան յարադրութեան բաղադրիչների ձուլման եղանակով ունենք վերահաս համադրական բարդութիւնը՝ անսպասելիօրէն վրայ հասած՝ հասնող. սպառնացող. շուտ վրայ հասնող՝ մօտալուտ, ինչպէս՝ «Ես դա գգացի, ինչպէս թոչունն է զգում վերահաս փոթորկի շունչը» (ՊՍ 1, 277): «Ով առանց այն էլ շատ է սպասել՝ Հիւրասիրում եմ վերահաս «շուտ»-ով» (ՊՍ 1, 374):

Արդի հայերէնում վերահասու համադրական (ածանցաւոր) կազմութիւնը գրաբարեան՝ ժառանգութիւն է. գործածւում է գիտակ, իմացող, լաւատեղեակ. մի քանի ուշադիր հետեւող ածականական իմաստներով: Օրինակ. «Դրան էլ վերահասու են ահա էս ինչ ու էն ինչ վկաները» (ՅԹ 6, 74):

Արդի հայերէնում կենսունակ գործածութիւն ունի գրաբարեան վերահասու լինել յարադրութիւնը՝ գործի հանգամանքներին տեղեակ՝ իրազեկ լինել, իմանալ իմաստներով: Օրինակ. «Նա խնդրեց ինձ համբերել մի քանի ժամանակ, մինչեւ ինքը վերահասու կը լինի դպրոցի ներքին կեանքին» (Պ. Պոռնեան):

Արդի հայերէնի որոշ ածական անուններ առաջացել են մակբայական եւ բայական կապակցութիւններից, որտեղ բայա-

կան բաղադրիչը հանդէս է գալիս անցեալ դերբայի ձեւով՝ գրեմ – գրեալ, յիշեմ – յիշեալ, բերեմ – բերեալ եւ այլն: Օրինակ. վերոգրեալ, վերոքերեալ եւ վերոյիշեալ յատկանշային բառերը, որոնք առաջացել են գրաբարեան վերոյ գրեալ, վերոյ բերեալ // ի վեր բերեալ եւ վերոյ յիշեալ յարադրութիւններից՝ բաղադրիչների ձուլման ճանապարհով:

Վերոյ գրեալ յարադրութիւնը նշանակում է վերելում՝ նախապէս գրուած, *ինչպէս՝ «Ասաց նմա զամենայն զվերոյ գրեալսն» (ՆՃԲ Բ., 815):*

Արդի հայերէնում գործածւում է բաղադրիչների միաձուլ գրութեամբ՝ շարադրամբի՝ գրուածքի նախորդ մասում գրուած իմաստով, ինչպէս՝

«Տիրացում բարձր-բարձր կարգում էր *վերոգրեալ* երեւելի հրամանը, իսկ տէրտէրն ու տանուտէրը բերանները բաց՝ մոտիկ էին տալիս» (Պ. Պոռշեան):

Վերոյ յիշեալ յարադրութիւնը գրաբարում նշանակում է խօսքի նախորդ մասում յիշուած՝ վկայուած, *ինչպէս՝ «զՅովսէփ, զօր ի վերոյն յիշեցաք» (Կոր. 74):*

Արդի հայերէնում այն համադրական կազմութիւն է՝ վերոյիշեալ, որ հանդէս է գալիս նախնական իմաստով, ինչպէս՝ Բացի *վերոյիշեալ* հրաշքներից՝ նախքան արքաներ կան թաղուած Առաքելոց եկեղեցում (Ն. Զարեան):

Ի վեր բերեմ յարադրութիւնը նշանակում է «վերել բերել՝ տանել. բարձրացնել», *ինչպէս՝* Ի վեր ելանէ Յիսուս ի ջրոյն եւ ընդ իւր ի վեր բերէ զաշխարհ (ՆՃԲ Բ., 801):

Համատիպ յարադրութիւնից արդի հայերէնում ունենք վերոքերեալ *ածանցաւոր կազմութիւնը՝ ածականի արժէքով՝* վերելում՝ նախապէս ասուած, նախապէս վկայուած՝ ասուած (միտք) *նը-շանակութեամբ: Օրինակ. «Վերոքերեալ լեզուական փաստերը մեծապէս օգնել են պատմահամեմատական լեզուաբանութեան մասնագետներին՝ յանգելու լեզուների ցեղակցութեան գաղափարին»:*

Գրաբարում առաջի կայ *կապակցութիւնը նշանակում է* դիմացը՝ առջեւը գտնուող, մերձակայ, առընթեր, մօտակայ, *ինչպէս՝ «Զի եթէ յօժարութիւնն առաջի կայ, ըստ գոյին ընդունելի է» (Բկր Է, 12): «Այլ զայս ամենայն ժամանակս, որ առաջի կայ՝ յայտնապէս պատմեսցի» (ԲՄԼ Դ, 18): «Փոխանակ պատմութեանս, որ նմա առաջի կայր, յանձն էառ գիւմբերութիւն մահու» (Նդ. 100): «Այլ որ*

ինչ յարեմուտս կոյս ընդ Տիտանեան է սորա գործ փաջութեան՝ ասել կայ մեզ *առաջի*» (Խոր. 46):

Գրաբարում վերոբերեալ բառակապակցութեան բաղադրիչներին ձուլման եղանակով ունենք նոյնիմաստ համադրական կազմութիւնը՝ առաջիկայ, ինչպէս՝ «Հատցուք աստանօր գրանս վասն երկարութեան առաջիկայ գործոյս» (Խոր. 14): «Թէ որպէս ի խիթի լինելով Ածդահակայ՝ առաջիկայ իւր դիպուածն տեսանէ սփանչելի երագով» (Խոր. 74): «Ես կամէի ի ձեռք սկսեալ յամենայն առաջիկայ փաղափս խաղաղութեամբ եւ փաջօրէն ազատութեամբ զմուտն առնել» (Խոր. 287): «Թողէ՛ք անդր զառաջին յանցանս ձեր, եւ զառաջիկայ իրս ուղղեցէ՛ք» (Եղ. 165)²³:

Արդի հայերէնում ունենք գրաբարեան համադրական կազմութիւնը՝ առաջիկայ, «մօտալուտ, մօտակայ, գալիք» իմաստով, ինչպէս՝ «Մանեն առաջիկայ հանդիպմանը պատրաստուում էր ամենայն քծախնդրութեամբ» (Նար-Դոս):

Գրաբարում արագ մակբայը ընթանալ բայի հետ կազմում է յարադրութիւն՝ արագ՝ շտապ՝ փութով առաջ գնալ իմաստով, ինչպէս՝ «Եւ ահա վաղվադակի արագս ընթացցին եւ թեթեւս հասանիցեն» (Ես Ե, 26):

Գրաբարում վերոբերեալ բառակապակցութիւնից ունենք արագընթաց համադրական կազմութիւնը սերիչ կաղապարի իմաստով, ինչպէս՝ «Կոչեն ի պատերազմ զփաջս եւ զարագընթացս» (Ոսկ.՝²⁴ Ա., 13): «Յարագընթաց ոտս փութացեալ» (Մագ.՝²⁵ ՆՀԲ):

Արդի հայերէնում ունենք արագընթաց համադրական կազմութիւնը՝ նախնական իմաստով, ինչպէս՝ «Որքան մա (ձին) ջրի մէջ արագընթաց էր, այնքան ցամաքի վրայ դանդաղկոտ դարձաւ» (Րաֆֆի):

Գրաբարում արագ հասանել վերլուծական կապակցութիւնը, բաղադրիչների բառիմաստներով պայմանաւորուած, նշանակում է շտապ՝ շուտափոյթ հասնել՝ տեղ հասնել, ինչպէս՝ «Արի արքայն Արտաշէս ... շատ ցաւեցոյց զմէջ փափուկ օրիորդին, արագ հասուցանելով ի բանակն իւր» (Խոր. 179):

23 Այս կիրառութեամբ առաջիկայ բարդութիւնն արտայայտում է բաղադրիչների ստուգաբանական (բառակազմական) նշանակութիւնը:

24 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԵՐԵՐԱՆ, *Մեկնութիւն աւետարանին Յովհաննու, Պոլիս 1717*: (Այսուհետ՝ Ոսկ.):

25 ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, *«Թղթերը»*, Աղեփսանդրապոլ 1910: (Այսուհետ՝ Մագ.):

Համատիպ յարադրութեան բաղադրիչների ձուլման ճանապարհով գրաբարում իսկ առաջացել է արագահաս համադրական բարդութիւնը՝ նախնական նշանակութեամբ: Ինչպէս՝ «Ածին ի վերայ անձանց զարագահասն կորուստ» (ԲՊտ Բ, 1):

Արդի հայերէնում կենսունակ գործածութիւն ունի արագահաս համադրական կազմութիւնը՝ ածականի յատկանշային նշանակութեամբ՝ շուտ հասնող, շուտ վրայ հասնող: Օրինակ. «Միեւնոյն ժամանակ, որպէս մի արագահաս փոքորիկ, յայտնուեցան մի քանի խումբ ձիաւորներ» (Րաֆֆի): «Տէ՛ր, արագահաս, Աստուած արդարի» (ՅԹ 1, 62):

Գրաբարում ձայնել քարձր կապակցութիւնը նշանակում է քարձր՝ որոտալի ձայնով կանչել, ինչպէս՝ «Ջարթուցեալ ձայնէր քարձր» (ՆՀԲ Ա., 462):

Յարադրութեան բաղադրիչների ձուլման եղանակով գրաբարում ունենք քարձրաձայն երկարժէք բառը՝ ածականի եւ մակբայի խօսքիմասային արժէքներով, ինչպէս՝ «Եւ ասէ Յուդիթ քարձրաձայն քարբառով» (ՅԹ 13, 17): «Ազդ առնէր քարձրաձայն» (Ագաթ. 236):

Արդի հայերէնում ունենք քարձրաձայն համադրական կազմութիւնը նախնական՝ երկարժէք իմաստով ու խօսքիմասային նշանակութեամբ: Օրինակ. Եւ քարձրաձայն աղաղակը թնդացրեց մեր աշխարհը (Հ. Յովհաննիսեան): «Ովքեր վատնում են իրենց ուժերը փսփսուքի մէջ, Մինչ կարող էին քարձրաձայն խօսել ...» (ՊՍ 1, 382)²⁶:

Գրաբարում քայլել թեթեւական կապակցութիւնը նշանակում է թեթեւ քայլով առաջ ընթանալ, ինչպէս՝ «Այլ ի վերայ ծովուն քայլէր թեթեւական» (ՆՀԲ Բ., 977):

Այդ յարադրութիւնից արդի հայերէնում ունենք համադրական՝ թեթեւաքայլ կազմութիւնը՝ ածականի եւ մակբայի խօսքիմասային արժէքներով. 1. թեթեւ քայլող, դիրաշարժ. «Թեթեւաքայլ եղնիկի պէս, նազ տալով, հալեցնում ես մատաղ սրտեր աչերով» (Հ. Յովհաննիսեան): 2. Թեթեւ քայլելով, ոտքերը արագ փոխելով. «Քայլիր թեթեւաքայլ քո դաշտով գարնամային» (Ե. Չարենց):

26 Բարձրաձայն քարդութեան սերիչ կաղապար կարող են դիտուել գրաբարի ի ձայն քարձր, քարձր ձայնի եւ համատիպ այլ կառույցներ, ինչպէս՝ ի ձայն քարձր գոչէր առիւծաբար (Փարպ. 151): Բարձր ձայնի գովեցին ամենեմեան (Փարպ. 174):

Գրաբարում անցանել ի մէջ // ընդ մէջ կապակցութիւնները նշանակում են մի բանի միջից՝ միջով անցնել. միջամտել, *ինչպէս*՝ «Եւ ասէ ցայրն, որոյ ձեռն գոսացեալ էր. Արի, *անց ի մէջ*» (Մկ Գ, 3): «Արի, *անց ի մէջ*. եւ նա յարուցեալ եկաց» (Ղկ Զ, 8): «Աստ ի մէջ անցեալ քոյր նորա Աստղիկ՝ համոզեալ դադարեցուցանէ զաղմուկն» (Խոր., 24):

Արդի հայերէնում վերոբերեալ յարադրութեան համադրական կառուցատիպից –իկ ածանցով ունենք միջանցիկ կազմութիւնը՝ նախնական յատկանշային իմաստով, *ինչպէս*՝ «Հիմա, հաւանաբար, լսափողով այդ նոյն, ինչպէս մուշ անցուղով, Պիտի մի ցուրտ սողայ, մի *միջանցիկ* կեղծիք» (ՊՍ 3, 186): «Թող որ բաց լինի ե՛ւ օդանցք, ե՛ւ դուռ, *Միջանցիկ* քամին քող որ ներս խուծի» (ՊՍ 1, 71)²⁷: «Պէտք է խուսափել *միջանցիկ* քամիներից, որ փչում են դէմ դիմաց բացուած պատուհաններից»:

Գ. Մակրայ + քայ > մակրայ

Փոխակերպական այս կաղապարով արդի հայերէնում ունենք հիմնիվեր, հիմնայատակ, բարձրթողի եւ այլ մակբայներ: Փոխակերպական գործընթաց են ապրել նաեւ զրաբարեան որոշ անուանական յարադրութիւններ, որոնց արտայայտութեան յարդակում կան կա՛մ նախդրաւոր մակբայներ կա՛մ նախդրաւոր կապակցութիւններ:

Դիտարկենք զրաբարեան հիմն ի վեր, հիմն ի յատակ, բարձի քողի (առնել) յարադրական կազմութիւնների ձեւակազմական փոփոխութիւնները լեզուի տարժամանակեայ կտրուածքում:

Գրաբարում հիմն ի վեր վերլուծական կազմութիւնը նշանակում է հիմքից վեր մինչեւ վերել՝ յատակը. տակնուվրայ, քարուքանդ, *ինչպէս*՝ «Խլել, քակել, *հիմն ի վեր* ջանայր առնել» (Ագաթ. 16): «Արդ մեծ ամուրդ այդ *հիմն ի վեր* տապալեցաւ (Նդ. 56): «Հիմն ի վեր ջանայր առնել» (Ագաթ. 16):

Արդի հայերէնում այն հանդէս է գալիս բաղադրիչների միաձոյլ գրութեամբ՝ հիմնիվեր՝ բառիմաստի ընդարձակումով. 1. հիմքը դէպի վեր դարձած, հիմքից կործանուած, հիմնակործան, 2.

27 Հմտ. նաեւ արդի հայերէնում *միջանցուկ* նոյնիմաստ կազմութիւնը՝ «Թեքե՞ւ է հագել... *Միջանցուկ* քամի՞... Օդանցքը փակել...» (ՊՍ 1, 71):

հիմնովին, արմատապես, ամբողջապես: *Օրինակ. «Յանախ գրածս փոխում եմ հիմնիվեր, արմատապես» (Շիրվանզադե)*²⁸:

Գրաբարում հիմն ի յատակ վերլուծական կազմութիւնը ի-մաստով համարժէք է հիմն ի վեր կապակցութեանը, ինչպէս՝ «Առնեն աւերակ, քակեն հիմն ի յատակ» (ՆՀԲ Ա., 97):

Ժամանակակից հայերէնում այն հանդէս է գալիս բաղադրիչների միաձուլ գրութեամբ՝ հնչիւնական որոշակի փոփոխութեամբ՝ հիմնայատակ՝ մինչեւ հիմքը յատակ դարձրած՝ քարուքանդ եղած յատկանշային իմաստով: *Օրինակ. «Թող աւերուի հայրենի տունն հիմնայատակ» (Հ. Յովհաննիսեան):*

Գրաբարում բարձի թողի առնել²⁹ յարադրութիւնը նշանակում է վերցնել ու մի կողմ դնել. անտեսել, աչքից հեռու թողնել, ինչպէս՝ «Ձծերացեալսն մի քարձի թողի առնիցէ՛ք (ՆՀԲ Ա., 461): Աստուած քարձի թողի արար գնոսա՛ւ երթալ գհետ սրտից իւրեանց» (ՆՀԲ Ա., 461):

Ժամանակակից հայերէնում ունենք համադրական բարձի-թող եւ բարձիթողի կազմութիւնները՝ անուշադրութեան մատնուած, երեսի վրայ թողնուած, անտես արած, լքած իմաստներով, ինչպէս՝ «Նրա անմիջական օգնութեամբ կազմակերպութեան աշխատանքը, որ մի ժամանակ քարձիթողի վիճակում էր, աշխուժացաւ»:

Մակրայ + քայ > մակրայ փոխակերպական կաղապարը համեմատաբար նուազ յաճախականութիւն ունի, քան մակքայի եւ բայի յարադրութեամբ փոխակերպման այլ դրսեւորումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Լեզուի բառային մակարդակի միաւորների արտայայտութեան եւ բովանդակութեան պլանների յարաբերակցուած քննութիւնը ցոյց է տալիս, որ լեզուի տարժամանակեայ դիտուածքում փոխուել են որոշ բառերի արտայայտութեան հարթակները,

28 Էդ. Աղայեանի կազմած քացատրական քառարանում *հիմնիվեր* տրուած է երկգրութեամբ՝ քաղադրիչների անջատ եւ միասին գրութեամբ (ԱՂԱՅԵԱՆ, ԷԴ., *Արդի հայերէնի քացատրական քառարան*, Երեւան 1976):

29 Բարձի բաղադրիչը յանգում է գրաբարի *քառնալ* («բարձրացնել, վրան առնել, ջնջել, վերացնել») բայի կատարելին (ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., *Հայերէն ստուգաբանական քառարան*, Երեւան 2010, 118):

եւ այդ կարգի բառերը վերլուծական կառուցատիպից անցել են կցականութեան:

Վերլուծական տիպից կցականութեան անցումն ուղեկցւում է փոխակերպական որոշակի կաղապարներով, որոնց մէջ կենսունակ են գոյական + բայ > բայ, գոյական + բայ > ածական կաղապարները, որոշակի դեր ունեն նաեւ գրաբարեան նախդրաւոր վերլուծական կառոյցները, ինչպէս նաեւ մարմնամասերի անուանումներով վերլուծական յարադրութիւնները:

Փոխակերպական այդ կաղապարների մէջ որոշակի դեր ու կշիռ ունեն մակբայ + բայ կաղապարը, որի միջոցով ձեւաւորուած բարդութիւններն արդի հայերէնում յատկանշւում են բայի, ածականի եւ մակբայի խօսքիմասային արժէքներով եւ կենսունակ գործածութիւն ունեն լեզւում: Այդ կարգի միաւորների բառակազմական ստուգաբանութիւնը ցոյց է տալիս, որ դրանք ձեւաւորուել են մակբայի եւ բայահիմքի ձուլման ճանապարհով, որ ընթացել է փոխակերպական գործընթացի որոշակի կանոններով. մի իրողութիւն, որ պայմանաւորուած է լեզուի բառակազմութեան տեսութեան իւրայատկութիւններով:

Ընդհանուր հայերէնի շրջանակներում դիտարկուող մակբայ + բայ փոխակերպական կաղապարի դրսեւորումները համակողմանի ուսումնասիրութեան կարիք են զգու՛մ. մէկ յօդուածի շրջանակներում հնարաւոր է ամբողջապէս ներկայացնել կաղապարի բոլոր հնարաւոր իրացումները: Սոյն յօդուածը գաղափար է տալիս լեզուի տարժամանակեայ կտրուածքում առկայ իրողութեան վերաբերեալ, որի համապարփակ ուսումնասիրութիւնը կարող է առանձին մենագրութեան նիւթ հանդիսանալ:

ԼԱԼԻԿ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Summary

TRANSFORMATION OF OLD ARMENIAN
ANALYTICAL CONSTRUCTIONS INTO COMPOUND
WORDS WITH A PATTERN ADVERB + VERB
(DYACHRONIC ASPECT)

LALIK KHACHATRIAN

The study of expressions and plans of the content of Old Armenian analytic constructions shows that in dyachronical period of language a number of structures went through a number of complexities, structures appear with monolithic writing of components.

The transition from analytical type to agglutination is accompanied by certain transformative patterns, among which the noun + verb > verb, noun + verb > adjective patterns are viable, the prepositional analytical structures of Old Armenian, as well as the analytical relations with the somatisms, also play a certain role.

Among those transformative patterns, the adverb + verb pattern has a certain role and weight, through which the complexities formed have a viable use in Modern Armenian. The lexical etymology of such units shows that they were formed through the assimilation of the adverb and verbal steem, which proceeded according to certain rules of the transformational process. a reality that is conditioned by the peculiarities of the theory of word formation of the language.

So, in the Modern Armenian we have a number of compound words, formed by assimilation of adverbs and verbs. The compound words in this article presented with morphological values and pick out some compound verbs, adjectives and adverbs.

a) With pattern adverb + verb > verb in the Modern Armenian we have the following compound verbs: *ստաշարկել* suggest, *բացառել* except, *ստաշարկել* nominate, *միջամտել* intervene, *հետապնդել* chase, *շրջանցել* bypass etc.

b) The verbal bases of the complexities formed by the pattern adverb + verb > adjective, are characterized by the meaning of subordinate participles,

such as: *վերահասուն* – *observer*, *վերոգրեալ* – *above-stated*, *վերոյիշեալ* – *above-mentioned*, *վերոքերեալ* – *above-mentioned*, *ստացիկայ* – *forthcoming*, *արագընթաց* – *fast*, *քեքեւափայլ* – *step by step*, *միջանցիկ* – *through* etc.

Part of them appear the morphological value of adverbs and in the morphological level demonstrated the morphological polysemy.

c) With pattern adverb + verb > adverb in the Modern Armenian we have the following compound adverbs, such as: *հիմնիվեր* – *thoroughly*, *հիմնայաւսակ* – *thoroughly*, *քարձիքողի* – *derelict* etc.

The study transformation of analytical constructions into compound words with a pattern adverb + verb, is essential from the point of view of the historical lexicology of the language, in particular, the generalization of the description of historical word building.